# ՆՈՐԱՕԾ 19 ՔԱՀԱՆԱՆԵՐՆ ԱՅՍՈՒՀԵՏԵՎ ԻՐԵՆՑ ՀՈԳԵՎՈՐ ՍՊԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԲԵՐԵՆ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ 19 նորաօծ քահանաներ ծառայության կոչվեցին Հայ Առաքելական Ս. Եկեղեցու թեմերում և կառույցներում:

Նրանք բոլորը՝ քահանայից պատրաստման լսարանի առաջին 12 շրջանավարտները և Գևորգյան Հոգևոր Ճեմարանն ավարտած 7 սարկավագներ, քահանայական ձեռնադրության և օծման էին արժանացել դեռևս հոկտեմբերի 10-ին՝ ձեռամբ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի: Ձեռնադրությունից հետո, ավարտելով 40-օրյա պահեցողության շրջանը Մայր Աթոռում, նորընծա քահանաները նոյեմբերի 21-ին իրենց անդրանիկ Ս. Պատարագը մատուցեցին Հայաստանի տարբեր եկեղեցիներում:

Հայրապետական տնօրինությամբ Տ. Նորայր քահանա Սիմոնյանը նշանակվել է բանակի հոգևոր սպասավոր, Արարատյան Հայրապետական թեմում իրենց ծառայությունը կմատուցեն Տ. Ղազար քահանա Պետրոսյանը (Բյուրեղավան), Տ. Բաբկեն քահանա Հայրապետյանը (Նուբարաշեն), Տ. Թովմա քահանա Անդրեասյանը (Դալար), Տ. Հուսիկ քահանա Նուրիջանյանը (Խոր Վիրապի վանք), Շիրակի թեմում՝ Տ. Եզնիկ քահանա Գալստյանը (Ախուրյան), Տ. Փավստոս քահանա Սարգսյանը (Արթիկ), Արագածոտնի թեմում՝ Տ. Մուշե քահանա Վահանյանը (Ձքնաղ), Տ. Մանուել քահանա Մկրտչյանը (Աշտարակ), Արցախի թեմում՝ Տ. Առաքել քահանա Ղազարյանը, Տ. Գյուտ քահանա Ղահրամանյանը, Տ. Մատթեոս քահանա Դրավանցը, Գուգարաց թեմում՝ Տ. Սիմեոն քահանա Առաքելյանը (Իջևան), Տ. Վրթանես քահանա Բաղալյանը (Վանաձոր), Գեղարքունյաց թեմում՝ Տ. Ներսես քահանա Շահնազարյանը (Ճամբարակ), Կոտայքի թեմում՝ Տ. Մաշտոց քահանա Բաբայանը (Աբովյան), Տ. Սմբատ քահանա Սարգսյանը (Առինջ), Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմում՝ Տ. Անանիա քահանա Բաբայանը՝ (Ռոստով), Տ. Արիստակես քահանա Հովհաննիսյանը (Մոսկվա):

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*